

«26» դեկտեմբեր 2019թ.

No 3918 – Ա

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՃՈՊԱՆՈՒՂՈՒ ՏԱՐԱԾՔՈՒՄ  
ԴԵԿՏԵՄԲԵՐ-ՄԱՐՏ ԱՄԻՍՆԵՐԻՆ ՇՏԱՊ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով կառավարության 2018 թվականի հունիսի 11-ի 728-Լ որոշմամբ հաստատված առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի «20» ենթակետը, ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքի ճոպանուղու տարածքում դեկտեմբեր-մարտ ամիսներին շտապ բժշկական օգնության ծառայության հերթապահությունը կազմակերպելու նպատակով.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. Սահմանել հերթապահություն ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքի ճոպանուղու տարածքում ՀՀ Կոտայքի մարզի «Հրազդանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության շտապ բժշկական օգնության ծառայության միջոցով, սույն թվականի դեկտեմբերի 30-ից մինչև 2020 թվականի մարտի 8-ը ներառյալ ժամանակահատվածում՝ ուրբաթ, շաբաթ, կիրակի, տոնական և ոչ աշխատանքային օրերին, ժամը 09:00-ից 18:00-ը:

2. Սույն հրամանի 1-ին կետով սահմանված հերթապահությունը իրականացնող ՀՀ Կոտայքի մարզի «Հրազդանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության «Շտապ բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի 2020 թվականի տարեկան պայմանագրային գումարը ավելացնել 769,538 հազար դրամով և ֆինանսավորել միանվագ:

3. Հերթապահություն իրականացնող անձնակազմի աշխատանքի 1 ժամվա համար սահմանել լրացուցիչ աշխատավարձի հետևյալ չափաքանակները (ներառյալ հավելումները).

- 1) բժիշկ - 1038 դրամ,
- 2) բուժքույր – 577 դրամ,
- 3) վարորդ-սանիտար - 513 դրամ:

4. Հերթապահության ընթացքում կատարված շտապ բժշկական օգնության կանչերը ընդունել և փոխհատուցել ընկերության համար հաստատված 2020 թվականի տարեկան պայմանագրային գումարի շրջանակներում՝ մեկ կանչի համար հաստատված գնով:

5. ՀՀ Կոտայքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնակատար Անի Զիլինգարյանին (համաձայնությամբ).

1) շտապ բժշկական օգնության ծառայության աշխատանքը արդյունավետ կազմակերպելու նպատակով ապահովել սույն հրամանի 1-ին կետով սահմանված հերթապահության ժամանակացույցի մշակումը,

2) յուրաքանչյուր երկուշաբթի առողջապահության նախարարություն ներկայացնել տեղեկատվություն արձանագրված դեպքերի մասին հետևյալ բնութագրով՝ անուն, ազգանուն, ծննդյան տարեթիվ, բուժօգնության տեսակ, ախտորոշում, հոսպիտալացում, և այն ուղարկել info@moh.am էլեկտրոնային հասցեին:

6. «Լեռնատուր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գլխավոր տնօրեն Հայկ Պողոսյանին (համաձայնությամբ)՝ շտապ բժշկական օգնության ծառայության հերթապահություն իրականացնող անձնակազմին ապահովել համապատասխան պայմաններով հագեցված տարածքով:

7. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝ ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայք-էջում:

8. Առողջապահության նախարարության քարտուղարության պետ Զարուհի Դարբինյանին՝ մեկօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը:

9. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել առողջապահության նախարարի տեղակալ Արտյոմ Սմբատյանին:

ԱՐՄԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ